



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Ք. Երևան
6 օգոստոսի 2020թ.**

ԲԴԽ-44-ՈՎ-12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍՅՈՒՋԱՆՆԱ ՈՒԼԻԽԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

նախագահությամբ՝

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ

Ռ. Վարդազարյանի,

մասնակցությամբ՝

անդամներ

Գ. Բեքմեզյանի,

Ա. Հայկյանցի,

Հ. Հովհաննիսյանի,

Մ. Մակյանի,

Լ. Մելիքջանյանի,

Ա. Մխիթարյանի,

Ս. Չիչոյանի,

Վ. Քոչարյանի,

Բարձրագույն դատական խորհուրդը, խորհրդակցական սենյակում քննարկելով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սյուզաննա Ուլիխանյանին (այսուհետ՝ Դատավոր) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Դատավորների

ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 29.06.2020 թվականի թիվ N-Կ-9/2020 միջնորդությունը, անհրաժեշտ է համարում լրացուցիչ հետազոտել Հանձնաժողովի կողմից ներկայացված ապացույցները, մասնավորապես Դատավորի կողմից արձակուրդում գտնվելու ժամանակ կատարողական թերթերի տրամադրման ամբողջական գործընթացը:

Գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների, այն է՝ Դատավորի կողմից կատարված գործողությունների պարզումը, ինչի շրջանակներում որոշում է վերսկսել գործի քննությունը և Դատական դեպարտամենտից պահանջել 18.02.2020 թվականի դրությամբ Դատավորի կողմից տրամադրման ենթակա բոլոր կատարողական թերթերի քանակի և դրանց ընթացքի մասին ամբողջական տեղեկատվություն:

Ուստի, ղեկավարվելով «Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» 04.06.2018 թվականի թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 107-րդ կետով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով Բարձրագույն դատական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սյուզաննա Ուլիխանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդության քննությունը վերսկսել, Բարձրագույն դատական խորհրդի նիստը հրավիրել 2020 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 14³⁰-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կորյունի 17/:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ

Ա. ՀԱՅԿՅԱՆՑ

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մ. ՄԱԿՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ

Ա. ՄԻՒԹԱՐՅԱՆ

Ս. ՉԻՉՈՅԱՆ

